**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

<<22 >> << մայիս >> 2014 N 44
ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 23-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> N50-Ն որոշման 2.1 կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում գտնվող պոլիկլինիկայի նախկին մասնաշենքը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնման ընդունման աշխատանքների կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանի վրա:

3..Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի

մայիսի 22 - ի N 44 կարգադրության

<<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում գտնվող պոլիկլինիկայի նախկին մասնաշենքը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն հանձնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ`

1. Սամվել Շահրազյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

2.Կարապետյան Անահիտ - ՀՀ Վայոց ձորի մարզի << Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն

3.Մարգարյան Ալբերտ- ՀՀ Վայոց ձորի մարզի << Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տնտեսական գծով տեղակալ

4.Սաֆարյան Աննա - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

5. Ղազարյան Գագիկ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչատնտեսական բաժնի պետ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Կ.ՍԱՀԱԿՅԱՆ